

Ս. Ս. Մարգարյան

ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱ-ՈՃԼԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հայոց լեզվի հարուստ բառազանձի և հատկապես նրա բայական կազմի մեջ ուրույն տեղ զբաղեցնում է հարադրավոր բայերն ունեն ոչ միայն դարձվածաբանական, այլև իմաստաբանական ու ոճաբանական մեծ արժեք ու նշանակություն, որը և պայմանավորվում է նրանց ձևաբանական յուրահատուկ կառուցվածքով և այն իմաստով, որ արտահայտում են հարադիրն ու բայական բաղադրիչը միասին իբրև բառային մի միություն: Ըստ որում՝ եթե հենց իրենց ձևաբանական ընդհանուր, այսինքն՝ (կարողի + բայ) կառուցվածքով հարադրավոր բայերը չեն տարբերվում իրարից, ապա իմաստային-իմաստաբանական տեսակետից, ընդհակառակն, նրանք էական տարբերություններ են երևան հանում միմյանց նկատմամբ և մեզ ներկայանում կա՛մ իբրև դարձվածային հարադրավոր բայեր, կա՛մ իբրև ոչ այդպիսիք:

Ձևաբանական կառուցվածքի ընդհանրությամբ հարադրավոր բայերը միամբողջություն են կազմում և այդ ամբողջության մեջ հանդես գալիս իբրև նկարագրական կամ պատկերավոր ձևեր, ինչպես, օրինակ՝ աչք ածել, դիտել, գցել, քն տալ, լեզու առնել, ձայն տալ, լույս ընկնել, հանդես գալ, ներս ընկնել, դեմ առնել, շուտ գալ, լաց լինել, բաց անել, սիրտ դնել, տակնուվրա անել, անց կենալ, վրա ածել, ներս ու դուրս անել, խաղա լինել, կայծակին տալ, ախ փաշել, շաղ տալ, կախ անել, կախ լինել, բավալ-թավալ լինել, պատառ-պատառ անել և այլն: Նկատի առնելով հավանաբար սոսկ այդ՝ ձևաբանական կառուցվածքի նույնության հանգամանքը, որոշ լեզվաբաններ (Ա. Այտընյան, Հր. Աճառյան) բոլոր հարադրավոր բայերը ոճեր կամ դարձվածներ են համարել ոչ մի տարբերություն չտեսնելով, ասենք, աչք ածել (սիրտ կողմը նայել, դիտել, որոնել) և անց կենալ (սանցնել), բերան անել (սերտել, անգիր անել) և բաց անել (բանալ, բացել), կրակ տալ (սկսել, այրել) և կախ տալ (կախել), պահ մտնել (թաքնվել, թաք կենալ) և պատառ-պատառ անել (պատառոտել), սիրտ դնել (հուսադրել, քաջալերել) և սկիզբ առնել (սկսվել) և նման այլ զուգահեռ ձևերի միջև:

Արդ՝ հարց է ծագում. ձևաբանական նույնօրինակ կառուցվածք ունեցող ձևերը իմաստապես ճիշտ նո՞ւյն միավորներն են և արդյոք բոլոր դեպքերում դարձվածային նշանակություն են արտահայտում, թե՞ ոչ: Իմաստաբանական տեսանկյունից հայերենի բազմաբանակ հարադրավոր բայերի զննությունը ցույց է տալիս, որ այս դեպքում նրանք երբեք չեն ընդհանրանում ու կազմում մի ամբողջություն, որ կան բայեր, որոնք արտահայտում են յուրահատուկ իմաստային նշանակություն, որը և չի բխում նրանց բաղադրիչների բուն նշանակություններից, և, ընդհակառակն, կան բայեր, որոնք ոչ թե յուրահատուկ իմաստային, այլ մի այնպիսի նշանակություն են արտահայտում, որն այս կամ այն չափով իր մեջ է առնում նրանց բաղադրիչներից որևէ մեկի նշանակությունը: Այստեղից էլ հետևում է, որ բոլոր այն հարադրավոր բայերը, որոնք յու-

րահաստուկ իմաստային կամ անթարգմանելի դարձվածի (իդիոմի) նշանակություն չեն արտահայտում, «ոճեր» կամ «դարձվածներ» կոչվել չեն կարող. այդպիսի բայերը, ինչպես՝ անտես անել (= անտեսել), անց կենալ (= անցնել), բաց անել (= բանալ, բացել), լող տալ (= լողալ), խաղ անել (= խաղալ), ձիվ տալ (= ձգել), այլև առաջ գնալ, դուրս փախչել, մեջ բերել, մոտ գալ, վրա հասնել, վալր փաշել, ցած գլորվել և այլն, նույնանալով դարձվածային հարադրավոր բայերին իրենց ձևաբանական կառուցվածքով ու նկարագրական բնույթով, իմաստաբանական տեսակետից տարբերվում են դրանցից և մոտենում կամ հարում համադրական բայերին: Բայց ոչ դարձվածային հարադրավոր բայերն ու այդ վերջինները իմաստաբանական մերձեցմամբ հանդերձ դարձյալ չեն նույնանում իրար և երևան են հանում իրենց բնույթին համապատասխան տարբերություններ:

Եվ դա միանգամայն հասկանալի է. համադրական բայերը ձուլվել են կազմություններ են և, իբրև այդպիսին, այս կամ այն բայագաղափարը արտահայտում են ոչ նկարագրորեն կամ պատկերավոր ձևով: Եվ, ընդհակառակն, իմաստաբանորեն նրանց մերձակից հարադրավոր բայերը, իբրև վերլուծական կազմություններ, այս կամ այն բայագաղափարը արտահայտում են միայն ու միայն նկարագրական ու պատկերավոր ձևով, սահմանազատվելով այդպիսով նրանցից:

Այդ հիման վրա էլ կարելի է ասել, որ ոչ դարձվածային հարադրավոր բայերը իմաստաբանական տեսակետից բռնում են դարձվածային հարադրավոր բայերի ու համադրական բայերի միջին տեղը և նույն այդ շափով էլ երևան հանում թե՛ իմաստային-իմաստաբանական և թե՛ ոճական-ոճաբանական արժեք հայոց լեզվում:

Գալով այն հարցին, թե ոչ դարձվածային հարադրավոր բայերը իրենց ընդհանուր նշանակության մեջ ինչպես և ինչ շափ են ներառում բաղադրիչներից որևէ մեկի նշանակությունը, պետք է ասել, որ ամենից առաջ նրանք միատեսակ պատկեր չներկայացնելով՝ բաժանվում են երկու խմբի. մի խմբի հարադրավոր բայերի ընդհանուր նշանակության մեջ մերվում կամ արտացոլվում է հարադրի նշանակությունը, իսկ մյուսինի մեջ էլ բայական բաղադրիչը ուղղակի հանդես է գալիս իր բուն նշանակությամբ:

Նույն այդ հանգամանքով պայմանավորված՝ առաջին խմբի բայերը կառուցված են ունենալ իրենց համապատասխան համադրական ձևերը, ինչպես օրինակ՝ անտես անել-անտեսել, անց կենալ-անցնել, աղոթք անել-աղոթել, աշխատանք անել-աշխատել, արձագանք տալ-արձագանքել, բաց անել-բացել (բանալ), բնաջինջ անել-բնաջնջել, գրոհ տալ-գրոհել, դաշունահար անել-դաշունահարել, եռ անել-եռացնել, եռ գալ-եռալ, գրույց անել-գրուցել, թաց անել-թացացնել, լաց լինել-լալ (լացել), լող տալ-լողալ, խաղ անել-խաղալ, խրատ տալ-խրատել և այլն, և այլն:

Բերված օրինակները պարզ ցույց են տալիս, որ այդպիսի դեպքերում եթե հարադրիչները գործողության շատ ընդհանուր (իմա՝ հիմնական ձևությամբ) կամ մի այլ նշանակություն են արտահայտում, ապա բայական բաղադրիչները, բայացնելով նրանց, կոնկրետացնում են այդ նույն նշանակությունը և կազմում համադրական բայերին համարժեք հարադրավոր բայեր. ուրեմն՝ միևնույն բայագաղափարը կարող է արտահայտվել ու արտահայտվում է երկու տարբեր՝ համադրական և հարադրական ձևերով, որոնցից ամեն մեկն էլ ոչ թե

անհարկի, այլ անհրաժեշտաբար է առաջ եկել լեզվում և իր ինչպես իմաստային-իմաստաբանական, այնպես էլ ոճական-ոճաբանական ուրույն դերն է հաղում այդտեղ. ի տարբերություն համադրական բայերի, դրանց համարժեք հարադրավոր բայերը, անշուշտ, իրենց հետ բերում են իմաստային նրբերանգություն, ժողովրդական շունչ և արտահայտչականություն, նոր հույզ ու զգացմունքայնություն, տարբեր տեսակի բազմազանություններ մտցնելով լեզվի մեջ: Այլապես իրոք ավելորդ կլինեին նրանցից մեկն ու մեկը, և լեզուն էլ, սոսկինք, միտք անել-մտածել, թույլ տալ-թույլատրել, լաց լինել-լալ, կոխլանել-կոշել, եւ զալ-եռալ, կանգ առնել-կանգնել, իմաց տալ-իմացնել, լող տալ-լողալ, բզդի-բզդի անել-բզկտել, սլաք գալ-սլարել, կախ անել-կախել, պատասխան տալ-պատասխանել և նման բազմաթիվ ձևերից կընտրեն ու գործ կածեն միայն մեկը:

Բայց դա, իհարկե, բոլորը չէ. հարադրավոր բայերը իմաստափոխական մեծ արժեք են ներկայացնում նաև այն տեսակետից, որ նրանցից շատերը իրենց համադրական զուգահեռներն ունենալով՝ դրանց նկատմամբ իմաստային, հաճախ արմատայնության հասնող, տարբերություններ են երևւած հանում և արտահայտում այլ նշանակություններ. այսպես՝ տարբեր նշանակություններ են արտահայտում թափ տալ-թափել, ֆառ տալ-քաշել, նիզ անել-ճգնել, շառ տալ-շաղել և այլ զուգահեռ ձևերը: Հարադրավոր բայերի իմաստափոխական արժեքը, սակայն, չի սպառվում այդքանով: Համադրական բայաձևեր ունեցող և իմաստապես դրանցից ավել կամ նվազ շափով տարբերվող հարադրավոր բայերից բացի առավել մեծ թիվ են կազմում այն բայերը, որոնք լեզվի մեջ հանդես են գալիս իբրև առանձնակի միավորներ և Մ. Աբեղյանի բնորոշմամբ «Թեպետ մեկ բառի նշանակություն ունին և ուրիշ լեզուների մեջ մեկ բառով են արտահայտվում, բայց հայերենում չունին համապատասխան նշանակությամբ նույնանիշ բայեր մեկ բառով (ընդգծումը մերն է — Ա. Մ.)»¹: Սա էլ հենց ցույց է տալիս, որ կան բազմաթիվ բայազաղափարներ, որոնք արտահայտվում են միայն կամ գլխավորապես հարադրավոր բայերի միջոցով. և հետևաբար՝ հարադրավոր բայերը ոչ թե համադրական բայերին ածանցյալ կամ նրանց ստորադասվող, այլ ինքնուրույն արժեք ու անհրաժեշտական նշանակություն ունեցող բայական ձևեր են և, բնականաբար, ծառայում են այնպիսի գաղափարների արտահայտման նպատակին, որպիսիք հնարավոր չէ լիարժեքաբար արտահայտել համադրական բայերով կամ լեզվական այլևայլ միջոցներով: Այստեղ էլ հիշելով հայ մեծ մտածող Մ. Նալբանդյանի խոսքերն այն մասին, որ «աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկա մաթեմատիկաբար ճիշտ միևնույն նշանակությունը տվող, ամենքն էլ տարբերվում են իրարից թե՛ շատ և թե՛ քիչ»², պետք է ասել, որ ինչպես համադրական զուգահեռներ ունեցող, այնպես էլ առանց դրանց լեզվում գործածվող հարադրավոր բայերը, մա՛նավանդ, արտահայտում են տարբեր և այնպիսի նշանակություններ, որոնց համար կյանքի են կոչվել հենց իրենք: Ի հաստատումն դրա վերցնենք, օրինակ՝ ականջ անել, զուլիս բերել, երես տալ, լեզու առնել, խելի գալ, կարմրիմ տալ, ուշի բերել... և առևտուր անել, դուր գալ, զանց անել, հալումաշ լինել, շաղ գալ, ոտնակոխ անել, փոքսող տալ... հարադրավոր

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 171:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 213:

բայերը. ինչպես մեկ, այնպես էլ մյուս դեպքում դրանց հարադիրներին համանշանակ կամ ընդհանրապես համադրական բայեր չեն կազմվում (չի կարելի, օրինակ, ասել, ականջել, փորսողալ)։ Ուստի այն նշանակությունները, որ արտահայտում են այդ բայերը, հենց դրանց բնորոշ ու սեփական նշանակություններն են և թեև կարող են արտահայտվել նաև կա՛մ այլ բնույթի համադրական բայերով, ինչպես՝ ականջ անել՝ լսել, խելի՛ գալ՝ խելոքանալ, ուշի՛ բերել՝ զգաստացնել, սթափեցնել, կա՛մ նկարագրական եղանակով, ինչպես՝ կարմրիս տալ՝ կարմրի նման փայլել, կարմրի նման երևալ, ռոնակոխ անել՝ ոտքի տակ տալ, ոտքի տակ կոխկրտել, փորսող տալ՝ փորի վրա սողալ, բայց և այնպես չեն ժխտում ո՛չ հարադրավոր բայերի բառային ինքնուրույնությունը և ո՛չ էլ նրանց իմաստա-ոճաբանական բավական մեծ արժեքը հայոց լեզվում։ Հարադրավոր բայերը, ինչպիսին էլ որ լինեն նրանք՝ դարձվածային, թե ոչ դարձվածային, համապատասխան համադրական ձևեր ունեցող, թե չունեցող, այդպիսիներին իմաստապես մերձակից, թե դրանցից խիստ տարբերվող և այլն, բազմատեսակ բայական զաղափարների արտահայտման լավագույն ու գեղեցիկ ձևեր են և իրենց ինչպես հիմնական, այնպես էլ նրբերանգային իմաստներով ու նշանակություններով զարդարում են հայոց լեզուն, դրան սլատկերավորություն, ժողովրդայնություն, կենդանություն, կենսախնդություն ու արտահայտչականություն տվող լեզվական միջոցների մեջ զրավելով իրավամբ առաջին ու առաջնակարգ տեղը։

Այդ տեսակետից, անշուշտ, նվազ դեր չունեն նաև այն հարադրավոր բայերը, որոնց մեջ բայական բաղադրիչը պահում է իր բուն նշանակությունը և, ինչպես հայտնի է, բայական բարդություն կազմում տեղի կամ տարածական իմաստ արտահայտող հարադրի հետ, ինչպես՝ առաջ գնալ, առաջ ֆաշել, դեմ առնել, դեմ տալ, դուրս անել, դուրս թռչել, ետ գնալ, ետ վազել, մեջ բերել, մեջ մտնել, ներս ընկնել, վրա ածել և այլն, և այլն։ Այդպիսի բայերը, որոնք մեծ մասամբ առանձնահատուկ իմաստային կամ անթարգմանելի դարձվածի (իդիոմի) նշանակություն չեն արտահայտում, այսինքն՝ դարձվածային հարադրավոր բայեր չեն, ունեն իրենց ուրույն իմաստային-իմաստաբանական և ոճական-ոճաբանական առանձնահատկությունները։

Այս դեպքում ևս՝ թեև նույն բայագաղափարը կարելի է արտահայտել թե՛ տեղի հարադիր ունեցող և թե՛ որևէ համադրական բայով, ինչպես դուրս անել-արտաքսել, ներս գնալ-մտնել, ներս անել-մտցնել, վեր ելնել-բարձրանալ, այլև՝ մոտ գլուխ-մոտենալ, մոտ բերել-մոտեցնել և այլն, բայց դա ընդհանուր բնույթ չի կրում. տեղի հարադրով բայերը ըստ մեծի արտահայտում են այնպիսի նշանակություններ, որոնք իրենց մեջ առնում են նաև հարադրի նշանակությունը, և այդ պատճառով մի այլ բառով սովորաբար չեն փոխանակվում. հասկանալի է, որ նրանք փոխանակվել չեն կարող նաև իրենց բայական բաղադրիչով, որ առանձին վերցրած մի այլ, իսկ բարդության մեջ՝ հարադրի հետ նրանից տարբեր նշանակություն է արտահայտում. այսպես՝ իրենց նշանակությամբ տարբեր են անել և առաջ անել (այլև՝ դեմ անել, դուրս անել, վեր անել...), բերել և առաջ բերել (այլև՝ դուրս բերել, վայր բերել, վրա բերել...), լռել և առաջ լռել (այլև՝ դուրս թռչել, ետ թռչել, վրա թռչել...), ֆաշել և սռաջ ֆաշել (այլև՝ դուրս քաշել, ետ քաշել, մոտ քաշել...) և նման բազմաթիվ ձևերը, որոնց բաղադրումն էլ թերևս ամենալավ սլատկերացումն է տալիս այն մասին, թե տեղի հարադրով բայերը իմաստա-ոճաբանական ինչպիսի արժեք

ու դեր ունեն լեզվում: Կազմվելով ոչ մեծ թվով հարադիրներից և, ընդհակառակն, բազմաքանակ ու բազմատեսակ բայերից, դրանք բնականաբար արտահայտում են գործողության բազմազան հասկացություններ և, իբրև ներդաշնակվող ձևերի մի մեծ ամբողջություն, ընդարձակելով բայական խոսքի մասի սահմանները՝ բառակազմական, ձևաբանական-քերականական, իմաստային-իմաստաբանական, ոճական-ոճաբանական և մի շարք այլ տեսակետներից ավելի՛ ճոխ, ավելի՛ հարուստ ու բազմերանգ դարձնում հայոց լեզուն. այստեղ էլ մի անգամ առանձնապես աչքի է զարնում այն մեծ դերը, որ կատարում են տեղի կամ տարածական իմաստ արտահայտող առաջ, դեմ դեմ, դուրս, մեջ, վեր, վրա, վայր (վար, վեր), ցած և այլն հարադիրները՝ բազմաքանակ բայերի հետ հարադրվելու և բազմաքանակ հարադրավոր բայեր կերտելու իրենց մեծ ուժով ու հատկություններ:

Այս բոլորն էլ գալիս է ասելու, որ հարադրավոր բայերի ընդհանուր բառակազմի իմաստային-իմաստաբանական շատ լայն ընդգրկումներ ու հարբստություններ ունի: Եվ իսկապես՝ հայոց լեզվի բառապաշարի ուրույն շերտերից մեկը լինելով, հարադրավոր բայերը մյուս բոլոր տեսակի, ասենք, թե՛ համադրական բայերի և թե՛ այլևայլ բառերի պես կարող են նաև մեկից ավելի իմաստներ կամ նշանակություններ արտահայտել. րստ այդմ էլ նրանք ևս երկու խմբի են բաժանվում. այն բայերը, որոնք մեկ իմաստ են արտահայտում, մի խումբ են կազմում և կոչվում են մենիմաստ կամ միանշանակ հարադրավոր բայեր, ինչպես՝ աղաչանք անել (= աղաչել), թափ կենալ (= թաքնվել), իմաց անել (= իմացնել), կատակ անել (= կատակել), նվեր տալ (= նվիրել), պատասխան տալ (= պատասխանել), փայլիմ տալ (= փայլել, շողալ) և այլն: Իսկ այն բայերը, որոնք մեկից ավելի իմաստներ են արտահայտում, կազմում են մյուս խումբը և կոչվում են բազմիմաստ կամ բազմանշանակ հարադրավոր բայեր, ինչպես, օրինակ՝ ձեռք փաշել նշանակում է՝ ա) «հրաժարվել, ետ կանգնել մի բանից» («Բոլորը ձեռք փաշեցին թղթախաղից» Եղ. Չարենց, Ընտիր երկեր, էջ 31.) և բ) «ստորագրել» («— Ամեն տեսակ թղթի տակ ձեռք փաշելու սովորություն չունիմ» Խ. Պատկ., Երկ., էջ 588), շուտ տալ նշանակում է՝ ա) «շրջել, մյուս երեսի վրա դարձնել» («Հիվանդին շուտ տվեց երեսի վրա և մեջքը բաց արավ» Շիրվ., Երկ. Ժող., 3-րդ հ., էջ 482), բ) «պատեցնել, պտույտ տալ, պտտել» («Բանալին շուտ տվեց փականքի մեջ», Նար-Դոս, Երկ. Ժող., 2-րդ հատ., էջ 492), գ) «մի կողմի վրա դարձնել՝ թեքել» («Զիռ գլուխը շուտ տվեց դեպի կամուրջը», Բաֆ., Սամվ., էջ 513), դ) «տապալել, գլորել» («— Մեջք-մեջքի տանք՝ սարեր շուտ կտանք», Պ. Պռոշ., Հացի խնդիր, էջ 252), ե) «փոխել» («16-ն այսպես մի կերպ շուտ տվին» — Պ. Սևակ, Անլու. զանգ., էջ 83), զ) «ման գալ շրջել» («Հարուստ տնից բերած հարսը մեջ ուտելու, հեռու շուտ տալու սովոր կ'իսի», Ս. Խանզ. Մխ. Սպ., էջ 211) և այլն. դուրս ընկնել նշանակում է՝ ա) «տեղից խախտվել, իր սովորական տեղից դուրս գալ» («Հայտնվեց, որ Միքայելի կուռը չի կոտրվել, այլ ոսկորն էլ դուրս ընկել տեղից», Շիրվ., Քառու, էջ 404), բ) «Դուրս նետվել, վազելով դուրս գնալ, դուրս թռչել» («էս ասում է Ավետիքին ու կատաղած դուրս ընկնում», Ղ. Աղ., Երկեր, 2-րդ հատ., էջ 61), գ) «դուրս ցցվել, տռվել» («Ինքը Պետրոս Մասիսյանը միջահասակ մարդ էր, հաստիկ, կլորիկ, փորը դուրս ընկած», Բաֆ., Ոսկ. աքաղ., էջ 80), դ) «հանկարծ հայտնվել, երևալ» («Որտեղից որտեղ դուրս է ընկնում Օննիկը», Գ. Մահ., Եր. սոմ., էջ 145), ե) «փչանալ, անպետքանալ, այլասերվել, երես առ-

նել» («Ես այն դուրս ընկած աղջկան իմ տունը հարս չեմ բերի», Ստ. Մալխ. Հրբ., 1-ին հատ., էջ 539) և այլն: Այդպես և մեկից ավելի իմաստներ են արտահայտում, ասենք, աչք ածել, աչք պահել, գլուխ դնել, գլուխ հանել, գլուխ պահել, բազ թողնել, դադար առնել, կրակ տալ, ձեռք առնել, ձեռք գցել, ձեռք տալ, նշան անել, ոտքի կանգնել, մտիկ անել, առաջ փաշել, դեմ առնել, դուրս բերել, դուրս գալ, դուրս տալ, վեր անել, վրա ածել, վրա տալ և մի շարք այլ բազմաթիվ հարադրավոր բայեր: Այստեղ էլ հարկ է հատուկ շեշտել, որ իրենց իմաստային նշանակությունների տեսակետից հայերենի հարադրավոր բայերը ընդհանրապես բավական բարդ և շատ բազմաձև պատկեր են ներկայացնում. կան բայեր, որոնք ոչ միայն իրարից զգալիորեն տարբերվող մի շարք իմաստներ կամ նշանակություններ, այլև այնպիսի բազմատեսակ իմաստային նրբերանգներ են արտահայտում, որ հաճախ դժվար է լինում դրանք ամբողջապես ընկալել ու ներկայացնել:

Բայց դա մի կողմ թողնելով, պետք է ասել, որ թեպետ հայ լեզվաբանական միտքը շատ մեծ նվաճումներ է ձեռք բերել հարադրավոր բայերի իմաստային նշանակությունների բացահայտման ուղղությամբ, բայց այնուամենայնիվ առ այսօր հնարավորին չափով նրանց աղջ հարստությունը իր արտացոլումը չի գտել բառարաններում: Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» նույնիսկ, որ հարադրավոր բայերի ընդգրկմամբ ու դրանց իմաստային նշանակությունների բացատրությամբ իրեն հավասարը չունի հայ բառարանագրության մեջ, թերի է և մեզ, դժբախտաբար, տվյալ դեպքում ամբողջական պատկեր չի տալիս: Մինչդեռ պարզ է, որ ինչպես լեզվի ընդհանուր բառապաշարի, այնպես էլ հարադրավոր բայերի իմաստային-իմաստաբանական առաջին ու լիակատար «քննությունը» բացատրական բառարանը կարող է լինել: Եվ իրոք. ինչքան էլ հարցը լայն և համակողմանիորեն ուսումնասիրվի, միևնույն է, տեսական ուսումնասիրությունը իր բովանդակությամբ միշտ էլ պիտի զիջի նրան, որովհետև միայն վերջինս կարող է պատկերել հարադրավոր բայերի իմաստային բազմազան նշանակությունները՝ իրենց բոլոր դրսևորումներով: Չնայած դրան, անժխտելի է նաև տեսական ուսումնասիրության արժեքն ու նշանակությունը. այն, ինչ թույլ չի տալիս արտահայտելու բառարանը իր որոշակի նպատակների թելադրմամբ, կարելի է արտահայտել տեսական ուսումնասիրության միջոցով, որը և այլ նպատակ չի հետապնդում, քան ցույց տալ քննարկվող երևույթի օրենքներն ու օրինաչափությունները:

Նույն այդ տեսանկյունից զննելով այն բազմազան իմաստային նշանակությունները, որ արտահայտում են հայերենի հարադրավոր բայերը, նկատում ենք, որ, օրինակ՝ միանշանակությամբ մեծ մասամբ աչքի են ընկնում ձայնարկությամբ, ածականով, այլև տրականով արտահայտված հարադիր ունեցող բայերը, ինչպես՝ ախ անել, ախ փաշել, հայ տալ, վայ անել..., անգիր անել, արյունաթաթախ անել, խեղդամահ անել, սովամահ անել..., աչքի ընկնել, այցի գալ, լեզվին տալ, կաբուրին տալ, մաբղու գնալ, չնկատելու տալ և այլն: Ավելի բազմազան արտահայտություններ ունեն յազմանշանակ հարադրավոր բայերը և դրանց մեջ էլ հատկապես նրանք, որոնք աչքի են ընկնում իրենց լայն ու հաճախակի գործածությամբ. այդպիսի բայերից են, օրինակ՝ անց կենալ, անց կացնել, բաց անել, բաց թողնել, դուրս գալ, վրա տալ և այլն, որոնց մի մասը (բաց անել, բաց թողնել, դուրս գալ և այլն) մինչև իսկ 15 և դրանից ավելի նշանակություններ է արտահայտում:

Բայց տվյալ դեպքում կարևորը ոչ թե այն է, թե որոնք են ավելի շատ աչքի ընկնում միանշանակությամբ և որոնք՝ բազմանշանակությամբ, որոնք գործածության ինչպիսի ոլորտներ են ընդգրկում և այլն, այլ այն, որ հարադրավոր բայերը, ընդհանուր առմամբ, բազմազան իմաստներ ու նշանակություններ արտահայտելով՝ բավականաչափ ընդարձակում են բայական խոսքի մասի իմաստային-իմաստաբանական շրջանակները, այդ տեսակետից ևս մեծ դեր խաղալով հայոց լեզվում:

Արդ՝ թե ինչո՞ւ շատ հարադրավոր բայեր միանշանակ կամ մենիմաստ են, իսկ շատերն, ընդհակառակն, բազմանշանակ կամ բազմիմաստ, ապա պետք է տեսնել, որ դա ունի իր որոշակի պատճառները և, անշուշտ, պայմանավորվում է յուրաքանչյուր բայի բովանդակությամբ, այսինքն՝ այն բանով, թե գործողության ինչպիսի հասկացություն է արտահայտում նա և ըստ այդմ էլ կարո՞ղ է արգյոք իմաստապես ճյուղավորվել, իր իմաստային տարբերակներն ունենալ, թե՞ ոչ:

Լեզվի փաստերը ցույց են տալիս, որ ի տարբերություն միանշանակ կամ մենիմաստ հարադրավոր բայերի, բազմաբանակ հարադրավոր բայերը հենց իրենց արտահայտված հասկացության ընձեռմամբ՝ լեզվում գործածելով իմաստային այլևայլ կիրառություններով, ժամանակի ընթացքում՝ համապատասխան հիմքի վրա ձևեր են բերել տարբեր իմաստային նշանակություններ. հաստատենք դա մի քանի կոնկրետ օրինակներով. առաջ Բաշել հարադրավոր բայը արտահայտում է երեք նշանակություն՝ 1. «Քաշելով մոտեցնել, քաշելով առաջ տանել» («նա գլուխը բարձրացրեց, սկուտեղը առաջ փաշեց», Շիրվ., նամ., էջ 175). 2. «Ստորին վիճակից բարձր վիճակի հասցնել, բարձր պաշտոն տալ, բարձր դիրքի հասցնել» («Եվ ժողովուրդը շի հասկանում յուր օգուտը. առաջ է փաշում մի տգետ հովվի», Հովհ. Թում., Երկ. ժող., 6-րդ հատ., էջ 61) և 3. «Առաջադրել ներկայացնել, հանդես հանել, ուղարկության արժանացնել» («Լսելով այդ որոշումը՝ ոգևորված ասել էր նա ու ամեն տեղ առաջ փաշել այդ հարցը», Ս. Խանգ., Հողը, 1-ին գիրք, էջ 53). առաջինը, ինչպես դժվար չէ նկատել, ֆիզիկական նշանակություն է, որով ցույց է տրվում մի բանի տեղից առաջ տանելը, այսինքն՝ մի առաջընթաց գործողություն, որի հիմքի վրա էլ օրինաշափորեն առաջ են եկել մյուս երկու նշանակությունները, որովհետև դրանք նույնպես այլ բան չեն արտահայտում, քան յուրատեսակ առաջընթաց: Կամ՝ «Բմբլահան անել» և «Փետրահան անել» իմաստապես մերձակից հարադրավոր բայերն ունեն երկուական նշանակություն. նրանց առաջին նշանակությունը նույնպես ֆիզիկական է և ցույց է տալիս որևէ թռչունի բմբուլները կամ փետուրները հանելը, նրան բմբուլներից կամ փետուրներից զրկելը. օրինակ՝ «Հավը բմբլահան արավ, հետո փորը բացեց» (Ստ. Մալխ., Հբբ., 1-ին հատ., էջ 375), «Վարժ ձեռքերով փետրահան էր անում նոր մորթած վառեկներ» (Նար-Դոս Երկ. ժող., 1-ին հատ., էջ 173), իսկ երկրորդը, ցույց է տալիս զուտ բարոյական նշանակություն. այն է՝ «Մեկին դատասպարտել, պարտության մատնել, ահգոր ու անուժ դարձնել» (օրինակ՝ «Վաշտի հրամանատարներն սկսում են լ մբլահան անել խոխովին», Մկր. Սարգ., Կյանքը կրակի տակ, էջ 294) և առաջինի հետ կապվում է այն շափով, ինչ շափով թռչունի բմբուլները կամ փետուրները հանելը և դրանցից զրկելը միաժամանակ նրան մերկ, անպարտող, անուժ ու անզոր թողնել է նշանակում:

Ծիշտ աշդպես էլ եթե զինաթափ անել մեկ ուղղակիորեն նշանակում է զենք ունեցողի զենքը (կամ զենքերը) խլիլ կամ ստիպմամբ այն դեն նետել տալ (օրինակ՝ «Դու ինձ մոտ թաք կկենաս, և երբ հարձակվի ինձ վրա, դու իսկույն կբռնես նրան և զինաթափ կանես»։ Ղ. Աղ., Ընտ. երկ., էջ 241) և մեկ էլ նշանակում է ո՛չ թե իսկապես զենքը խլիլ, մեկին զենքից զրկել՝ անզեն թողնել, այլ՝ «Հերքել՝ ի դերև անել մեկի պատճառաբանությունը, որ նա իբրև զենք է գործածում. ստիպել, որ տեղի տա» (օրինակ՝ «Այս խոսքերը բոլորովին զինաթափ արին Միքայելին», Շիրվ., Քառս, 334). պարզ է, որ այս վերջին նշանակությունը նույնպես սերտորեն կապվում է զինաթափ անել բայի առաջին նշանակության հետ ա՛յն հիմամբ, որ երբ մեկը զրկվում է իր զենքից ու անզեն մնում, այլևս չի կարող անել այն, ինչ նախապես ցանկանում էր կամ մտադիր էր անել։

Իրեն հատուկ մի բանի նշանակություններ է արտահայտում ծանր ու բերն անել հարադրավոր բայը. գա եթե մի ղեպքում ցույց է տալիս որևէ ֆիզիկական առարկայի կշիռը, ծանրության չափը որոշելու գործողություն (օրինակ՝ «Վասակը դարակի վրայից վերցրեց մի փոքրիկ պանրի կտոր, ծանր ու քեթև արեց ու դարձյալ տեղը գրեց», Ն. Զար., Հաց., էջ 504), ապա մի այլ ղեպքում ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը կապվում է մարդու ուղեղային գործունեության հետ և նշանակում է ոչ միայն «մի բան լավ կշռադատել, մի բանի մասին երկար մտածել, մտորել» (օրինակ՝ «Իսկ գյուղացիները շարունակում են ծանր ու քեթև անել. թե վերջն ինչ կլինի», Աղավ., Շիր., ՍԳ, № 6, էջ 57), այլև՝ «Քննել, վերլուծել, գնահատել, մի բանի արժեքը որոշել» (օրինակ՝ «Տանը, երեկոյան, մտմտաց մեկ էլ, ծանր ու քեթև արեց իր ցանկությունը և հարմար գտավ», Ակ. Բակ., Երկ., էջ 51). իմաստային նրբերանգումը իրարից տարբերվող այս վերջին երկու նշանակությունները նկարագրական եղանակով ցույց են տալիս, որ որևէ բանի մասին մտածելիս մարդն այն, կոպիտ ձևով սոսաժ, արդեն իր մտքում է տանում-բերում կամ չափում-ձևում։ Մի վերջին օրինակ. ոտքի կանգնել նշանակում է՝ 1. «նստած տեղից վեր կենալ, բարձրանալ կանգնել» (օրինակ՝ «Մարդիկ խմբով ոտքի են կանգնում և գլուխ էին տատալիս», Բաֆ., Կայծ., էջ 517), 2. «Ըմբոստանալ, ապստամբել, ծառանալ» (օրինակ՝ «Ամենքն էլ ոտքի կկանգնեն և քեզ թագավորությունից կգցեն», Ղ. Աղ., Ընտ. երկ., էջ 213) և 3. «Առողջանալ լավանալ, կարողանալ կանգնել ու ման գալ» (օրինակ՝ «Մինչև Ռաֆիկի առողջանալը, ոտքի կանգնելը... մարդիկ մեզ մատով են ցույց տալիս», Մկր. Սարգ., Կյանքը կրակի տակ, էջ 149—150). Եթե մենք նկատի ունենանք, որ մարդը առանց ոտքի վրա կանգնելու չի կարող ոչ «ըմբոստանալ, ապստամբել, ծառանալ» և ոչ էլ «լավ՝ առողջ լինել», ապա դրանով հենց պարզած կլինենք, թե ինչպես են առաջ եկել ոտքի կանգնել բայի վերջին երկու նշանակությունները և ինչով են կապվում նրա առաջին նշանակության հետ, որ գլխավորն է եղածների մեջ։

Այսպիսով, բերված մի բանի օրինակները ցույց են տալիս, որ իմաստային-իմաստաբանական իրոք լայն ու մեծ հարստություններ ունեն հարադրավոր բայերը, որ դրանք իրենց թե՛ ընդհանուր ու գլխավոր, և թե՛ մասնավոր, երկրորդական ու նրբերանգային բազմատեսակ իմաստներով ու նշանակություններով իմաստա-ոճաբանական բացառիկ մեծ արժեք են ներկայացնում հայոց լեզվի համար. մի արժեք, որ զնալով ընդլայնվում ու ավելի է մեծանում, որովհետև հարադրավոր բայերն իմաստային-իմաստաբանական տեսակետից ևս

տշ թե կանգնած են նույն կետի վրա, այլ շարունակ զարդանում են, կրում բառ-իմաստային փոփոխություններ և արտահայտում նորանոր նրբերանգային իմաստներ ու նշանակություններ. այդ ամենի ընթացքում էլ հաճախ պատահում է, որ հարադրավոր բայերն իրենց սովորական նշանակություններից բացի գործ են ածվում այնպիսի փոխաբերական նշանակությամբ, որ նրանց տալիս է դարձվածային բնույթ. այսպես՝ դուրս տալ բայը իր «ցնդարանել, ափեղ-ցփեղ տակից-զլխից խոսել» («Ճանճուր Իվանիչը ստից-դորդից...բավական դուրս տվավ», Րաֆ., Զահր., էջ 79) նշանակությամբ, վրա տալ-ը իր «արագ-արագ խոսել, խոսքերի տարափ տեղալ» («Իրար ետևից վրա տվավ Պետրոսը» Մուր., Երկ. ժող., 4-րդ հատ., էջ 85) նշանակությամբ, հուսալ տալ-ը իր «ճնշել, սեղմել, նեղել, նեղը լծել՝ գցել» («Սանդարյանը լսում էր այդ բոլորը, վրդովվում և սկսում ավելի հուսալ տալ», Ն. Զար., Հաց., էջ 223) նշանակությամբ և նրանից շատերն այդպիսի դեպքերում հանդես են գալիս իբրև դարձվածային հարադրավոր բայեր: Իսկ սա էլ հենց ցույց է տալիս, որ դարձվածային և ոչ դարձվածային հարադրավոր բայերը, իրենց իմաստային յուրահատկություններն ունենալով հանդերձ, սերտորեն կապված են իրար հետ, և նույն այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ ինչպես ոչ դարձվածային հարադրավոր բայերը ինչ-ինչ դեպքերում կարող են դարձվածային նշանակություն արտահայտել, այնպես էլ չի բացառվում, որ դարձվածային հարադրավոր բայերը ժամանակի ընթացքում զրկվեն իրենց դարձվածային նշանակությունից և դառնան ոչ դարձվածային հարադրավոր բայեր, ինչպես այդ տեղի է ունեցել, ասենք, պար գալ, կուլ տալ և այլն բայերի հետ:

Վերջապես, հարադրավոր բայերի իմաստ-ոճաբանական արժեքի մասին խոսելիս չպետք է մոռանալ ամենագլխավորը՝ այն, որ նրանք իրենց էությունամբ խորապես ժողովրդային-ժողովրդական ձևեր են և, բնականաբար, ամենից շատ գործ են ածվում ժողովրդա-խոսակցական լեզվի լայնածավալ ու լայնահուն օվկիանում. այսբանից, սակայն, չի հետևում և չի էլ կարելի հետևցնել, թե իբր նման բայերը տակավին բավարար տեղ չունեն գրական լեզվում. թե՛ հայ հին գրական լեզվի՝ գրաբարի, թե՛ դրա օրգանական շարունակությունը կազմող միջին հայերենի և թե՛ արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների բազմաշատ ու բազմահարուստ փաստերը ցույց են տալիս, որ նրանց դռները միշտ բաց են եղել հարադրավոր բայերի համար, որ ի դեմս հայ մշակույթը կերտողների ժողովրդական այդ գեղեցիկ ձևերն ազատ ու առատորեն մուտք են գործել գրական լեզուն՝ հաստատուն տեղ գրավելով այնտեղ:

Իրաբարյան գրավոր հուշարձանները և դրանց մեջ հատկապես՝ Աղաթան-վեղոսի, Փ. Բուզանդի, Մ. Խորենացու, Նղիշեի, Ղ. Փարպեցու, Հովհ. Մամիկոնյանի, այլև Շապուհ Բագրատունու, Մ. Ուռհայեցու և շատ ուրիշների գործերը պարունակում են հարադրավոր բայերի բավական հարուստ ու ճոխ գանձեր: Բազմատեսակ հարադրավոր բայերի հարստությամբ դրաբարին ամենևին չի դիչում նաև միջին հայերենը. այստեղ էլ մեր առջև վեր են հանում բժշկապետներ Միս. Հերացին ու Ամ. Ամասիացին, իրավագետ Սմբ. Սպարապետը, առակագիր Վ. Այգեկցին, տաղերգուներ Ֆրիկը, Գր. Աղթամարցին, Հովհ. Թլկուրանցին, Հ. Նրզնակցին, Խ. Կնչոռցին, Մ. Ղրիմեցին..., այլև Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նույան և շատ ուրիշներ, որոնց լեզվում գործածված հարադրավոր բայերն էլ նրանց լեզվի կենդանության ամենաաչքի ընկնող տարրերը լինելով՝ պատմական մեծ արժեք են ներկայացնում միաժամանակ՝ լավագույն հնարա-

վորություններ ընձեռելով՝ տեսնելու համար այն տեղաշարժերը, կերպարա-
նափոխություններն ու ձևափոխությունները, որ տեղի են ունեցել հարադրա-
վոր բայերի կյանքում:

Հարադրավոր բայերի ազատ մուտքը ժողովրդա-խոսակցական լեզվից դե-
պի դրական լեզուն հասկանալի պատճառներով ավելի է մեծանում այն ժամա-
նակ, երբ մի կողմից «կլր» ճյուղի բարբառների և դրանց մեջ հատկապես Պոլսի
բարբառի հիմքի վրա վեր է բարձրանում և աստիճանաբար մշակվում, հղկվում
ու կատարելագործվում արևմտահայ գրական լեզուն, իսկ մյուս կողմից իր հիմ-
քում ունենալով «ու՛մ» ճյուղի բարբառները և դրանց մեջ էլ հատկապես Երևանի
կամ Արարատյան բարբառը՝ արևելահայ գրական լեզուն է ծաղկում ու զարդա-
նում: Բայց այստեղ էլ հենց պետք է ասել, որ արևմտահայ գրական լեզուն, որի
հարադրավոր բայերով հարստացնելու գործում մեծ դեր են խաղացել Հ. Պա-
րոնյանը, Պ. Դուրյանը, Արփ. Արփիարյանը, Դ. Վարուժանը, Մ. Մեծարենցը,
Սիամանթոն, Երուխանը, Գր. Զոհրապը, Բ. Զարդարյանը, Երվ. Օտյանը, Լ.
Բաշալյանը և շատ ուրիշներ, տվյալ դեպքում շունի այն հարստությունը, ինչ
որ արևելահայ գրական լեզուն. իսկ դա այլ բանով չի բացատրվում, քան նրա-
նով, որ հարադրավոր բայերն ավելի շատ գործածական են ոչ թե «կլր», այլ
«ու՛մ» ճյուղի բարբառներում, որոնցից էլ հենց նրանք փոխանցվել են արևելա-
հայ գրական լեզվին ու դարձել դրա անկապտելի սեփականությունը:

Արևելահայ գրական լեզվի գանձարանում մեծ ավանդ են մուծել հատկա-
պես այն գրողներն ու բանաստեղծները, որոնք իրենց լեզվում լայն շափերով
են օգտագործել ժողովրդա-խոսակցական լեզվի բառ ու բանը, նրա անսպառ
հարստություններն ու արտահայտչական գեղեցիկ ձևերը. առաջին լավագույն
օրինակը ոչ պատահականորեն տվել է Խ. Աբովյանը, որի լեզուն էլ, ինչպես իր
ժամանակին Գր. Վանցյանն է նկատել, իրավամբ «Այդպիսի բայերի ու ձևերի
շտեմարան» է³: Բայց, շնայած դրան, Խ. Աբովյանը չի սպառել և չէր կարող
սպառել ժողովրդա-խոսակցական լեզվում հարստագրավոր բայերի ունեցած ողջ
հարստությունը. իր վերելքի ճանապարհին արևելահայ գրական լեզուն Մ. Նալ-
բանդյանի, Պ. Պոռչյանի, Ղ. Աղայանի, Բաֆֆու, Գ. Սունդուկյանի, Հովհ. Հով-
հաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Մուրացանի, Ալ. Շիրվանզադեի, Նար-Դոսի
Ավ. Իսահակյանի և շատ ուրիշների կողմից հարստանում ու համալրվում է հա-
րադրավոր բայերի հսկայական պաշարներով: Ի հաշիվ այդպիսի բայերի հայե-
րենի զարգացումը շարունակվում է հետագայում և մեր օրերում. հարադրավոր
բայերը մենք լայնորեն գործածված ենք տեսնում նաև Եղ. Չարենցի, Ակ. Բա-
կունցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ն. Զարյանի, Հ. Շիրազի, Պ. Սևակի,
Ո. Խանզադյանի, Աղավնու և ժամանակակից սովետահայ այլ գրողների ու բա-
նաստեղծների լեզվում:

Գեղարվեստական գրականության մեջ հարադրավոր բայերի լայն ու առաս-
դործածությունը, պարզ է, պայմանավորվում է նրանց իմաստա-ոճաբանական
ընդհանուր արժեքով ու նշանակությամբ. իբրև մտքի արտահայտման յուրա-
տեսակ պատկերավոր ու նկարագրական ձևեր, հարադրավոր բայերը գեղար-
վեստական կերպարներ կերտելու, գրողի ու նրա հերոսների լեզուն կենդանի,
հմայիչ, զգացումային ու արտահայտիչ դարձնելու լեզվական լավագույն մի-
ջոցներ են հանդիսանում: Գեղարվեստական խոսքի վարպետները, օգտագոր-

³ Գր. Վանցյան, Պատմական քերականութիւն, Թիֆլիս, 1906, էջ 36:

ծելով դրանք, չեն բավարարվում սոսկ եղածով, այլ եթե մի կողմից՝ բարբառներից առնում են նորանոր ձևեր ու քաղաքացիության իրավունք տալիս դրանց դրական լեզվում, ապա մյուս կողմից՝ բայաբառակազմության ճկուն օրենքների ընձեռումով իրենք են կազմում կամ կերտում հարադրավոր բայեր, այդ ճանապարհով նույնպես հարստացնելով նրանց կազմը:

Որ մայրենի բարբառից է Ակ. Բակունցը առել, օրինակ, մարմրին անել և սևին անել հարադրավոր բայերը, գործածելով առաջինը Ն. Գոդոլի «Տարաս Բուլբա»-ի հոյակապ թարգմանության մեջ՝ «Տիրամոր պատկերի առաջ մարմրին և անում կանթեղը» (էջ 77), իսկ երկրորդը՝ շնաշխարհիկ «Ալպիական մանուշակ»-ում՝ «Կաքավաբերդի զխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևի՛ն են անում բարձր բուրգերը» (Երկ., էջ 189): Մյուս՝ հեղինակների կողմից ստեղծված ձևերից են, օրինակ՝ Լիս անել (=լսել), գործ է ածել Ավ. Խաչակյանը («Գլուխդ դիր ուսիս վրա, Նազենի, Մի վաղուցվա հեքիաթ ասեմ, լիս առա», Երկ. ժող., 2-րդ հատ., էջ 36). Վ. Թոթովենցն ունի մանիշակագույնին տալ («Կանաչը կորչում է և մանիշակագույնին է տալիս», Երկ., էջ 158), Խ. Դաշտենցը՝ ձեռնացույց անել («Այս կամ այն գյուղացուն ձեռնացույց էր անում դաշտի մեջ երեացող հարյուրավոր դաշտերը», Խող., էջ 89), Հ. Ղուկասյանը՝ ոսկուն տալ («Նախկին հողատերերը թաքուն ու աշկարա ոչնչացնում էին դեռ նոր ոսկուն տվող համայնական արտերը», «Փունջ», էջ 244) և այլն, և այլն:

Իհարկե, միշտ չէ, որ բարբառներից առնված ձևերը գրական արժեք են ստանում կամ գրողները հաջող ու ընդունելի հարադրավոր բայեր են կազմում, բայց դա երբեք չի ժխտում այն ակնառու փաստը, որ գեղարվեստական գրականության լեզվի կարևոր բաղկացուցիչ տարրերից մեկը լինելով՝ հարադրավոր բայերը շարունակ աճում են ու ծավալվում, գեղարվեստական խոսքին տալով առանձին գեղեցկություն, ուժ ու հմայք:

Հարադրավոր բայերը, իբրև պատկերավոր բառեր, իրենց տեղն ունեն նաև գիտական, հրապարակախոսական, մասնագիտական, սովորական գրական և այլ բնույթի աշխատանքների լեզվում, կիրառվելով այդտեղ, սակայն, այն չափով, ինչ չափով որ նրանց քովանդակությունն է թելադրում կամ պահանջում. այսպես՝ գիտական աշխատությունների լեզվում, հենց գիտական ոճի պահանջներով պայմանավորված, սովորաբար գործ են ածվում աչի՛ր րնկնել, երևան հանել, երևան գալ, երևան բերել, ի հայտ բերել, ի հայտ գալ, մատնացույց անել, մատնանիշ անել, հանդես գալ, հանդես բերել, բույլ տալ, գործ ածել, նկատի առնել, նկատի ունենալ, հաշվի առնել, ձեռք բերել, տեղի ունենալ, տեղիք տալ, ցույց տալ, ի մի ամփոփել, ի մի բերել և նման մի շարք այլ հարադրավոր բայեր:

Այսքանից, սակայն, հետևո՞ւմ է, թե գրական լեզուն ամբողջապես առել է հարադրավոր բայերի այն հարուստ գանձերը, որ իրենց ընդերքում պարունակում են ժողովրդա-խոսակցական լեզուն, հայերենի բազմաշատ բարբառներն ու խոսվածքները. ամենևին՝ Գրական լեզվի հարստացման կարևորագույն աղբյուր են եղել և իբրև այդպիսին են մնում բարբառներն ու խոսվածքները, որոնք և ունեն տակավին գրական լեզվի մեջ չմերված ու նրա սեփականությունը չզործած ինչպես այլ, ափնպես էլ հարադրավոր բայերի բազմաթիվ ձևեր. ճիշտ է դրանցից մերժելի են այնպիսիները, որոնց հարադիրը կա՛մ լրիվ, կա՛մ մի մասով օտար բառ է՝ ինչպես՝ դավա անել, թամաշա անել, թափֆ անել:

խաբար անել, խաբար լինել, հաբամ անել, ռալալ անել, փիփր անել, ֆնահա-
րամ լինել, գլուլլախոռով անել և այլն, և այլն (ի դեպ նշենք, որ այդ բնույթի
բայերից ևս ոչ քչերը գրական արժեք են ստացել և գործ են ածվում գրական
լեզվում, օրինակ՝ դարդ անել, զոռ տալ, յոլա գնալ, յոլա տանել, ֆեֆ անել և
այլն), բայց կան նաև բայեր, որոնք զուտ հայկական են և գրողների լեզվաշի-
նարարական ճարտարապետական քուրաչով անցնելով՝ կարող են ուղղակի
դառնալ գրական լեզվի սեփականությունը:

Այս ամենն էլ վեր հանելով հարադրավոր բայերի ճոխ հարստություննե-
րը՝ մի վերջին անգամ ցույց են տալիս ու հաստատում, որ նրանք դարձվածա-
յին-դարձվածաբանական, իմաստային-իմաստաբանական, ոճական-ոճաբա-
նական իսկապես մեծ արժեք ունեցող լեզվական միավորներ են և շատ կարևոր
դեր են խաղում հայոց լեզվում:

А. С. Маркарян

СЕМАНТИКО-СТИЛИСТИЧЕСКИЕ ЗНАЧЕНИЯ СОСТАВНЫХ ГЛАГОЛОВ

Р е з ю м е

Составные глаголы, являясь аналитическими формами, имеют фразеологическое и семантико-стилистическое значение в армянском языке.

Обусловленные своей морфологической структурой, они выражают различные и разнообразные значения и с точки зрения семантики делятся на две группы — фразеологические и нефразеологические составные глаголы.

В статье на основе разнообразных языковых данных рассмотрены семантические и стилистические значения нефразеологических составных глаголов, показаны различия, которые обнаруживаются между составными и соответствующими синтетическими формами глаголов. Кроме того, отмечается, что составные глаголы бывают однозначными и многозначными. Широко употребляясь в литературном армянском языке, составные глаголы придают ему особую гибкость, красоту и обогащают семантику его словарного состава.